ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

22 փետրվարի 2022 թվականի թիվ 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 08-089-0102-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 8.704809 ՀԵԿՏԱՐ /ՎԿԱՅԱԿԱՆ 02082021-08-0039/ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՆՋՐԴԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆՆԵՐԻ՝ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8- րդ հոդվածի 1-ինմասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի <<Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին>> թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 03-ի դիմումը՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում մասնակի փակ հանդիսացող Գյումրու թիվ 3 <<Շիրակ >> գերեզմանատան ընդլայնման համար համայնքային գերեզմանատուն կազմակերպելու նպատակով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու վերաբերյալ՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ համայնքի

ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 08-089-0102-0001 կադաստրային ծածկագրով 8.704809 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասը /վկայական թիվ 02022021-08-0039/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն, այդ հողամասում Գյումրու թիվ 3 <<Շիրակ>> գերեզմանատան ընդլայնման համար համայնքային գերեզմանատուն կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականիդեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատվածկարգին համապատասխան՝ Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում սույն որոշման առաջին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -15	Դեմ – 0	Ձեռնպահ -12
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ		Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Կ.ԱՐՇԱԿՅԱՆ		Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԷԼԲԱԿՅԱՆ		Ա. ԴՐՄԵՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ		Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		Մ. ՄՆԱՑՅԱՆ
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ		Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ		Հ. ՆԱՎՈՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ		Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ		Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Կ. ՍԵՐԳՈՅԱՆ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

18 փետրվարի 2022թվական
գյուղ Ախուրյան